



Համարը
Տիպը Լրացուցիչ արձանագրություն
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17)
Ընդունող մարմինը Եվրոպայի խորհուրդ
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.01.2007

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Վարշավա
Ընդունման ամսաթիվը 12.09.2002
Ստորագրման ամսաթիվը 12.09.2002
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ԴՈՊԻՆԳԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ԴՈՊԻՆԳԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1989 թվականի նոյեմբերի 16-ին Ստրասբուրգում ստորագրված Դոպինգի դեմ կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) սույն Արձանագրության Մասնակից պետությունները,

հաշվի առնելով, որ Կոնվենցիայի 4.3.դ և 7.3.բ հոդվածներում նշված դոպինգային ստուգումների փոխադարձաբար ճանաչման վերաբերյալ ընդհանուր համաձայնությունը կբարձրացնի այդ ստուգումների արդյունավետությունը՝ նպաստելով այս բնագավառում գործող և ապագա երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերի ներդաշնակությանը, թափանցիկությանը և օգտակարությանը, և հարցի վերաբերյալ որևէ համաձայնության բացակայության դեպքում նման ստուգումների համար ապահովելով անհրաժեշտ իշխանություններ,

ցանկանալով կատարելագործել և ուժեղացնել Կոնվենցիայի դրույթները,

համաձայնեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

Հոդված 1. Դոպինգային ստուգումների փոխադարձաբար ճանաչում

1. Նկատի ունենալով Կոնվենցիայի 3.2-րդ, 4.3.դ և 7.3.բ հոդվածները՝ Մասնակիցները փոխադարձաբար ճանաչում են իրենց տարածքում Կոնվենցիայի այլ Մասնակից պետության մարզիկների և մարզուհիների նկատմամբ դոպինգային ստուգումներ անցկացնելու՝ մարզական կամ ազգային հակադոպինգային կազմակերպությունների իրավասությունը՝ համաձայն ընդունող երկրի ազգային կանոնակարգերի: Նման ստուգումների արդյունքները միաժամանակ ուղարկվում են տվյալ մարզիկի կամ մարզուհու ազգային մարզական ֆեդերացիային, ընդունող երկրի ազգային հակադոպինգային կազմակերպությանը և միջազգային մարզական ֆեդերացիային:

2. Մասնակիցներն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում նման ստուգումներ անցկացնելու համար, որոնք կարող են լրացնել նախորդ երկկողմ կամ այլ հաստուկ պայմանագրերով անցկացվող ստուգումները: Միջազգայնորեն ճանաչված չափանիշների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով մարզական կամ ազգային հակադոպինգային կազմակերպությունները պետք է ստանան ISO որակի չափանիշների արտոնագիր դոպինգային ստուգումների համար՝ ճանաչված Մոնիտորինգային խմբի կողմից, որը հիմնված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վրա:

3. Մասնակիցները նմանապես ճանաչում են Համաշխարհային հակադոպինգային գործակալության (World Anti-Doping Agency (WADA) և դրա ղեկավարության ներքո գործող դոպինգային ստուգումների այլ կազմակերպությունների՝ իրենց մարզիկների և մարզուհիների նկատմամբ դոպինգային ստուգումներ անցկացնելու իրավասությունը՝ լինի դա Մասնակիցների տարածքում, թե այլ տեղ: Այդ ստուգումների արդյունքներն ուղարկվում են տվյալ մարզիկների կամ մարզուհիների ազգային հակադոպինգային կազմակերպությանը: Ցանկացած նման ստուգում անցկացվում է Կոնվենցիայի 1.3գ հոդվածում նշված մարզական կազմակերպությունների հետ համաձայնությամբ՝ համաձայն գործող կանոնակարգերի և ընդունող երկրի ազգային օրենքի դրույթների:

Հոդված 2. Կոնվենցիայի կիրառման ուժեղացում

1. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն ստեղծված Մոնիտորինգային խումբը վերահսկում է Կոնվենցիայի կիրառումը և իրագործումը յուրաքանչյուր Մասնակցի կողմից: Այդ վերահսկումն իրականացնում է գնահատող խումբը, որի անդամներն այդ նպատակով նշանակվում են Մոնիտորինգային խմբի կողմից: Գնահատման խմբի անդամներն ընտրվում են հակադրական գային բնագավառում իրենց իրավասության ճանաչման հիման վրա:

2. Գնահատող թիմը քննում է շահագրգիռ Մասնակիցների կողմից նախապես ներկայացված ազգային հաշվետվությունները և անհրաժեշտության դեպքում իրականացնում է այցելություններ տեղում: Կոնվենցիայի իրականացման դիտարկումների հիման վրա նա ներկայացնում է գնահատման հաշվետվություն Մոնիտորինգային խմբին, որտեղ նշվում են նրա եզրակացությունները և հնարավոր առաջարկները: Գնահատման հաշվետվությունները պետք է հրապարակվեն: Շահագրգիռ Մասնակիցները գնահատման խմբի եզրակացությունների վերաբերյալ կարող են անել դիտողություններ, որոնք կազմում են հաշվետվության մասը:

3. Ազգային հաշվետվությունները պատրաստվում են, և այցելություններն անցկացվում են Մոնիտորինգային խմբի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն՝ խորհրդակցելով շահագրգիռ Մասնակցի հետ: Մասնակիցները թույլատրում են գնահատող թիմի այցելությունը և շահագրգիռ ազգային մարմիններին խրախուսում են լիովին համագործակցել նրա հետ:

4. Գնահատումների գործող ընթացակարգը (ներառյալ Կոնվենցիայի կատարման գնահատման համար համաձայնեցված սխեման), այցելությունները և հետագա գործողությունները նշվում են Մոնիտորինգային խմբի կողմից ընդունված կանոններում:

Հոդված 3. Վերապահումներ

Սույն Արձանագրության դրույթների վերաբերյալ ոչ մի վերապահում չի թույլատրվում:

Հոդված 4. Պարտավորված լինելու համաձայնության արտահայտում

1. Արձանագրությունը բաց է ստորագրման համար Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և Կոնվենցիան ստորագրած ու դրա Մասնակից հանդիսացող այլ պետությունների համար, որոնք կարող են պարտավորված լինելու իրենց համաձայնությունը արտահայտել.

ա) ստորագրությամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման վերաբերյալ վերապահումների.

բ) ստորագրությամբ, որը ենթակա է վավերացման, ընդունման և հաստատման, որին հաջորդում է վավերացումը, ընդունումը կամ հաստատումը:

2. Կոնվենցիան ստորագրող կողմը չի կարող ստորագրել սույն Արձանագրությունն առանց վավերացման, ընդունման կամ հաստատման վերաբերյալ վերապահման և չի կարող ի պահ հանձնել իր վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը, եթե նախապես կամ միաժամանակ չի հայտնել Կոնվենցիայով պարտավորված լինելու իր համաձայնությունը:

3. Վավերագրերը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 5. Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է եռամսյա ժամանակահատվածի ավարտին՝ հաշված այն օրվանից, երբ Կոնվենցիայի հինգ Մասնակից պետություններն արտահայտել են 4-րդ կետի համաձայն դրանով պարտավորված լինելու իրենց համաձայնությունը:

2. Ցանկացած պետության դեպքում, որը հետագայում արտահայտում է դրանով պարտավորված լինելու իր համաձայնությունը, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է եռամսյա ժամանակահատվածի ավարտին՝ հաշված ստորագրման կամ վավերագիրը, ընդունման, հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից:

Հոդված 6. Միանալը

1. Արձանագրությունը ստորագրման համար բացելուց հետո ցանկացած պետություն, որը միանում է Կոնվենցիային, կարող է միանալ նաև սույն Արձանագրությանը:

Միանալն ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին միանալու մասին փաստաթուղթն ի պահ

հանձնելուց հետո, որն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է եռամսյա ժամանակահատվածի ավարտին՝ դրա ի պահ հանձնման օրվանից հետո:

Հոդված 7. Տարածքային կիրառում

1. Ցանկացած պետություն կարող է ստորագրման ժամանակ կամ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Արձանագրությունը:

2. Ցանկացած պետություն հետագայում կարող է ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարագրով տարածել սույն Արձանագրության կիրառումը հայտարարագրում նշված ցանկացած տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է եռամսյա ժամանակահատվածի ավարտին՝ այդ հայտարարագիրը Գլխավոր քարտուղարի ստանալուց հետո:

3. Նախորդ երկու կետերի համաձայն արված ցանկացած հայտարարագիր այդ հայտարարագրում նշված ցանկացած տարածքի նկատմամբ կարող է չեղյալ հայտարարվել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղարկված ծանուցմամբ: Նման չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց հետո եռամսյա ժամանակահատվածի ավարտին:

Հոդված 8. Չեղյալ հայտարարելը

1. Յուրաքանչյուր Մասնակից կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ:

2. Նման չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է այդ հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց հետո վեցամսյա ժամանակահատվածի ավարտին:

Հոդված 9. Ծանուցումներ

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցում է Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին, Կոնվենցիան ստորագրած և դրան Մասնակից այլ երկրներին և ցանկացած պետության, որը հրավիրվել է միանալ դրան.

ա) ստորագրության,

բ) վավերագրի, ընդունման, հաստատման կամ միանալու փաստաթղթի ի պահ հանձնման,

գ) սույն Արձանագրության՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածների համաձայն ուժի մեջ մտնելու,

դ) չեղյալ հայտարարելու,

ե) սույն Արձանագրության հետ կապված ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հաղորդագրության մասին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Վարշավայում, 2002 թվականի սեպտեմբերի 12-ին, անգլերեն և ֆրանսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակով, որն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը փոխանցում է հաստատված օրինակները Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, Կոնվենցիան ստորագրած և դրան Մասնակից պետություններին և ցանկացած պետության, որը հրավիրվել է միանալու դրան:

Արձանագրությունը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2007 թ. հունվարի 1-ին: